№ 237 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 **1899** ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 № 237

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція „Мшакъ".
Կամ Tiflis. Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
ութանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1900** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։

Կայարաններ ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտաքսանմից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Բայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նաւագնացութեան զարգացման ընդհանուր ճիգեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Վրաց խմբի վերջին երկու ներկայացումները. Նամակ Պետերբուրգից. Նամակ Գանձակից. Նամակ Ղազախի գաւառից. Նամակ Սղնախից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԾԱՆՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԻԳԵՐ

—

Մեր դարը, որ արդիւնագործութեան և համաշխարհային առևտրի դար է, երբէք այնպիսի տենդային և եռանդուն գործունէութիւն չէ ցոյց տուել այդ ասպարէզներում, ինչպէս վերջին մի քանի տարիներում։ Բոլոր պետութիւնները առանձին ուշադրութիւն են դարձրել միջազգային վաճառականոցի վրա և աշխատում են ապրանքների փոխադրութեան համար ունենալ ոչ միայն երկաթուղիների խիտ ցանց, այլ և ուժեղ ու բազմաքանակ առևտրական նաւատորմ։ Գերմանական կառավարութիւնը այժմ պատրաստում է ծովային նաւատորմի նոր ծրագիր, որ պէտք է ներկայացնի ռէյխստագի հաստատութեան։ Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Մակ-Կինլի իր շրջաբերականի մէջ առանձնապէս շեշտում է առևտրական նաւատորմի ուժեղացնելու կարևորութեան վրա և յայտնում է, որ կառավարութիւնը մշակում է այդ առիթով լուրջ ծրագիրներ։ Ռուսաց կառավարութիւնը արդէն մեծ ծախքեր է արել առհասարակ նաւատորմի ընդարձակելու վրա և առաջիկայ 1900 թուականից առանձին արտօնութիւններ է շնորհում առևտրական նաւագնացութեան։

Բոլոր այն համագումար խոշոր արդիւնագործական ժողովներում, որ տեղի ունեցան վերջին ժամանակներս, առևտրական նաւատորմի զարգացումը գրաւեց առաջնակարգ տեղ։ Եւրոպական պետութիւնները և Ամերիկայի Միացեալ-Նահանգները, ցանկանալով իրանց ձեռքը դցել Ասիայի և Աֆրիկայի ցամաքի երկիրները և կղզիների վաճառականոցները, տեսնում են, որ անհրաժեշտ է մշտական հաղորդակցութեան և ապրանքների փոխադրութեան համար ունենալ մեծ նաւատորմ։

Առևտրի զարգացման տենդը այնպէս մեծ ծաւալ է ստացել և այնպէս նա աղդել է մտքերի վրա, որ այժմ պարլամենտները և ազգային ժողովները շատ քիչ հակառակութիւն են ցոյց տալիս պետական այդ տեսակ ծախքերի առաջարկներին և ձայների մեծամասնութեամբ ընդունում են միլիոնաւոր բիւջետը։ Անկասկած առաջիկայ պարլամենտական նստաշրջաններում կընդունվեն շատ ծրագիրներ, որոնք կը պահանջեն պետութիւններից նորանոր փոխառութիւններ անել և աւելացնել պետական պարտքերի քանակութիւնը։

Համաշխարհային առևտրի զարգացումը, հին և նահապետական երկիրների վաճառականոցների գրաւումը, իր կողմից դրդում է այդ երկիրների ազգաբնակութեանը արթնանալ և նոյնպէս ձեռնարկել արդիւնագործական և առևտրական փորձերի։ Արդեօք այդ փորձերը կարո՞ղ կը լինեն լուրջ մրցութեան ասպարէզ բանալ և ապահովել այդ երկիրների տնտեսական ապահովութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Պատերազմի դաշտը ներկայումս ահռելի տեսարան է ներկայացնում և նրա վրա մեխված է ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։ Ահռելի է նա ոչ թէ իր կլանած զոհերի քանակութեամբ, ոչ, եթէ հաշի առնենք երկու կողմերի կորուստը, կը տեսնենք որ ամբողջ տրանսվաալեան պատերազմը սկզբից մինչև այժմ ամենաչատը կարող է հաւասարվել ֆրանս-պրուսական պատերազմի նշանաւոր (բայց ոչ ամենամեծ) ճակատամարտներից մէկի հետ։ Ահռելի է նա այն պատճառով, որ արիւնահեղ պայքարը շուտ չի վերջանալ, որ նա երկար կը ձգձվի, երկու կողմերն էլ կը լարեն իրանց բոլոր ոյժերը՝ վերջնական մի ելքի հասնելու համար։ Մի կողմից հպարտ Ալբիոնի ազգային արժանապատուութիւնը, միւս կողմից մի բուռն երկրագործ ժողովրդի հերոսական դիմադրութիւնը—սրանք ոյժեր են, որոնց ընդհարումից անդին դժբախտութիւններ պիտի սպասել։ Պատերազմի դաշտը տիրել է ամենքի մտքին. հազարաւոր մարդկանց աչքերից արտասունքներ են թափվում—այդ դեռ ոչինչ, ժամանակակից հասարակութիւնը այդ բանը հաւարում է անխուսափելի մի տուրք, որ վերցնում է պատերազմական Մողոքը։ Բոլոր երկիրների մամուլը անսպառ նիւթ է գտնում Անգլիան ծաղրելու, անգլիական առիւծի տիրութիւնը հաշակելու համար։ Քաղաքական պատգամախօսները շտապում են այս և այն դուշակութիւններն անել, այս կամ այն ճակատագիրը յատկացնել «խորամանկ Ալբիոնին»։ Բայց ինչ էլ լինի, ինչ բաներ էլ թելադրեն հաշիները ներկայ արիւնահեղութեան վերաբերմամբ, իրողութիւնը իրողութիւն է մնում. պատերազմը չէ կարող քաղաքակիրթ մարդկութեան համար ցանկալի երևոյթ համարվել, նա միայն բարբարոսութեան յայտարարն է։ Ներկայ արիւնահեղութեան ժամանակ նորից բարձրանում է հեղինակաւոր մարդու ձայնը, որ բողոքում է այդ երևոյթի դէմ։ «Образованіе» ամսագրի մէջ տպված է Ֆրանսիացի յայտնի գիտնական Շարլ Ռիշէի «Պատերազմ և խաղաղութիւն» յօդուածի թարգմանութիւնը։

Նախ քան եղբայրութեան և հաներաշխութեան գաղափարը կը թափանցէ մարդկանց հոգու մէջ—իսկ մենք դեռ շատ հեռու ենք այդ ժամանակից—պէտք է այսպէս թէ այնպէս խափանել պատերազմը։ Դրա համար անհրաժեշտ է կազմել միջնորդ դատարան։ Ինչպէս մասնաւոր մարդիկ ծագած վէճերը վճռելու համար դիմում են դատարանին, այնպէս էլ ազգերի համար պիտի գոյութիւն ունենայ միջնորդ ատեան, ընտրված ընդհանուր համաձայնութեամբ, և այդ ատեանին պէտք է յատկացնել միջազգային վէճերը։

Առ այժմ այդքանը միայն բաւական է։ Ցարդելի գիտնականը, ինչպէս նկատում էք, մի ուրիշ միջոց չէ գտել միջազգային շահերի ընդհարման դէմ, բացի այն. արդար միջոցից, որը վաղուց բոլոր գործիչների կողմից միակ իրագործելի հիմնարկութիւնն է ընդունվել և որը նոյն իսկ շատ դէպքերում է գործադրվել։ Բայց միջազգային դատարանները կարող են գործ տեսնել միայն այն դէպքում, երբ նրանց վճիռները պարտաւորական կը լինեն վճռող կողմերի համար։

Ահա ինչին պէտք է ձգտել յաջորդաբար և անդողդոջ կերպով. նախ պէտք է հիմնել մասնաւոր դատարան առանձին պետութիւնների մէջ, յետոյ ընդհանուր դատարան ամենքի համար, մինչև որ կը ստեղծվի միջազգային ուժեղ ատեան, որի վճիռները միանգամայն վերջնական կը լինեն։ Պէտք է, որ մենք ամենքս խօսքով, դրչով, խոր անդրդուելի համոզմունքով այն ճանապարհի վրա բերենք ամենքին, որոնք դեռ այդ բանը չեն հասկանում։ Մեր—գաղափարի քարոզիչներիս—ետևից կը գան միայն այն դէպքում, եթէ մենք ինքներս հաստատ վճռենք առաջ գնալ։ Ուրեմն կրկնենք մի անգամ ևս, որպէս զի մեզ լսեն. մենք ուտոպիստներ չենք, մենք ցնորքների ետևից չենք ընկած։ Այն, ինչին մենք ձգտում ենք, արդէն կիսով չափ արված է։ Միջազգային միջնորդ դատարանի ազնիւ գաղափարը իրագործման մօտ է։ Ճշմարտութիւնը աղաղակում է և չի ուշացնի իր յաղթութիւնը։ Այն ժամանակ, ճիշդ որ, կը սկսվի լաւագոյն ժամանակի արշալոյսը։ Ոսկի դարը, ի հարկէ, չի գայ—դեռ շատ բարեփոխութիւններ պիտի լինեն ապագայում։ Բայց, գոնէ, կը գայ բարբարոսութեան վերջը։

Բարբարոսութեան վերջ... Որպիսի դառն հեգնութիւն մի հեղինակաւոր մարդու բերանից մեր գոված ու փառաբանած ժամանակների վերաբերմամբ։ Բայց ո՞վ է կարող ասել, թէ մեր ժամանակներին յատուկ չէ բարբարոսութիւնը. տրանսվաալեան պատերազմը հէնց դրա համար է բորբոքվել XIX դարի նախավերջին տարվայ մէջ, որպէս զի ցոյց տայ առաջին, լայն հօրիզոնների սպասող մարդկութեան, թէ դեռ որքան նա հեռու է այդպիսի երազներին հասնելու իրաւունքից։ Եթէ դոնէ այս արիւնաշաղախ դրաման կարողանար մարդկանց աչքը բաց անել, կարողանար հասկացնել, որ պէտք է վերջ դնել այսպիսի բարբարոսութեան, այն ժամանակ գուցէ և կարելի կը լինի ասել, թէ զուր չը կորան մարդկային այնքան զոհերը, զուր չէին այնքան տանջանքները...

ՎՐԱՑ ԽՄԲԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Անցեալ հինգշաբթի վրաց դերասանական խումբը խաղաց Նէքսպիրի «Համլէտ» ողբերգութիւնը, որի համար յատուկ հրաւիրված էր Ռութայիսից վրաց տաղանդաւոր դերասան Վ. Ալեքսէեվ-Մէսխիեվ։ Դրանով թատրօնական կոմիտէտը մեծ զուարճութիւն պատճառեց հասարակութեան։ Դերասանը շատ է կատարելագործվել այդ դերի մէջ—նա խաղում է գեղարուեստօրէն և մեծ տպաւորութիւն է թողնում հանդիսականների վրա, թէև պէտք է ասել, որ ներգործող օրգաններից մէկը, ինչպիսին է ձայնը, դաւաճանում է դերասանին։ Նոյն գիշերը Օֆէլիայի դերի մէջ դուրս եկաւ նոր սկսող դերասանուհի օր. Սափարօվա։ Մեր կարծիքով, շատ վաղ է օրիորդի համար ստանձնել այդպիսի պատասխանատու դերեր։ Այդպիսի դերերի համար հարկաւոր է մեծ և լուրջ պատրաստութիւն, հմտութիւն և զարգացում։ Օրիորդը շատ թոյլ էր Օֆէլիայի դերի մէջ, թէև երգը աջող տարաւ. այդ պատասխանատուութիւնը ընկնում է բէմիսօրների վրա. դրանով կարող են չեղել օրիորդին իրան յատուկ ճանապարհից։

Վերջին հինգշաբթի, ամսոյս 15-ին, կայացաւ. Զէրքէզովայի բէնէֆիսը։ Խաղում էին ոչ հին, ոչ էլ նոր՝ «Մի եղերութիւն» անունով պիէս, հեղինակութիւն Փուրուլիի։ Հեղինակը անուանել է իր պիէսը «Կեանքի տեսարաններ» և այդպէս էլ է։ Ձեր առաջ կանգնած է վրաց իշխանուհի, որը մնանկութեան վերջին աստիճանի վրա է, որը ապրել է և դարձեալ ուզում է ապրել, ինքն էլ չիմանալով ինչ միջոցներով։ Սա աղջիկ ունի մարդու տալու և փնտռում է հարուստ փեսացու։ Այդ ժամանակամիջոցին Պետերբուրգից փախչում է Թիֆլիս մի իշխան-աւանտիւրիստ, որը մնանկացել է թէ բարոյապէս և թէ մտաւորապէս և այստեղ ուզում է գործերն ուղղել, ամուսնանալով հարուստ աղջկայ հետ։ Սա ունի մի հայ բարեկամ, որը ոչինչ միջոց չէ խնայում իր նպատակին հասնելու համար. նա փոքրուց կանաչի է եղել բերելիս իշխանուհու համար, վերջը մեծացել է, փող է վաստակել, աղա է դարձել, արտասահման է պտտել և իր բարեկամ իշխանի հետ Ռուսաստանի մայրաքաղաքում 15 տարի շարունակ գործել է մութ անկիւններում, մտնելով հասարակութեան մէջ իշխանի շնորհիւ, իսկ իշխանը նրա փողի շնորհիւ։ Նա իրան երջանիկ է համարում, որ մտել է վրաց ընտիր հասարակութեան մէջ՝ իր փողի շնորհիւ, առանց որի երեսն անգամ չէր կարող տեսնել... մի խօսքով թէև վաճառական է, բայց աֆերիստ է, ինչպէս և իշխանը։ Վերջինս առաջարկութիւն է անում օրիորդին՝ իր գործերն ուղղելու համար և օրիորդը համաձայնվում է՝ մօրից ստիպված լինելով, թէև օրիորդը սիրահարված է մէկ ուրիշի վրա։ Մայրը կարծում է, թէ իշխանը մեծ հարստութեան տէր մարդ է և սրա միջոցով կարող է գործերն ուղղել, և օրիորդը համաձայնվում է զոհ գնալ ընտանեկան բարգաւաճութեան համար։ Բայց տեսէք որ այս չարաբախտ հայը խանգարում է։ Ի հարկէ, ընթերցողը հասկացաւ, որ իշխանուհու վէկսէլները հայ վաճառականի մօտն են, սա գցել է նրան թակարդի մէջ և երբ ցանկանայ կարող է խեղդել։ Այդ բաւական չէ, իշխանն էլ պարտ է սրան 15 հազար բուբլի, ուրեմն թոկի երկու ծայրն էլ հայի ձեռքումն է. օրիորդի վրա աչք ունի, և այս հայը, պատմելով իշխանին իսկութիւնը, համոզում է նրան յետ վերցնել իր խօսքը։ Իշխանը սրան լսում է և հեռանում այդ տունից՝ անուանելով իշխանուհուն խաբեբայ։ Այս նեղ դրութեան միջոցին, երբ պարտատէրերը մի կողմից են խեղդում և իշխանը միւս կողմից է հեռանում, հայն առաջարկում է սրանց ազատել և պարտքերն իր վրա առնել, եթէ օրիորդը կը խոստանայ իր ձեռքը. բայց, ի հարկէ, սերժվում է և դուրս է վռնդվում, արժանի չը լինելով այդ երևակայական բարձրութեանը։ Վերջը... վերջը իշխանից բաւականութիւն է պահանջում օրիորդի ուսանող եղբայրը, որը վերադառնում է Ռուսաստանից և մեծամարտութեան ժամանակ վիրաւորվում է իշխանից, իսկ իշխանին պրիստաւը բանտարկում է Պետերբուրգից եկած գրութեան հիման վրա... Օրիորդն ամուսնանում է իր սիրած մարդու հետ և վիրաւորված ուսանողն էլ իր սիրած օրիորդի հետ. իսկ հայն և վեքսէլները ինչ եղան, չը գիտեմ...

Ցանկալի է, որ երկու հարևան ազգերը թատրոնը չը դարձնէին ազգութիւնները ծաղրելու տեղ։ Thaleia

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Դեկտեմբերի 11-ին

Շատերը գիտեն, որ Պետերբուրգում հիմնված է մի դրամարկղ, որի միակ նպատակն է՝ նիւթապէս օգնել չքաւոր հայ ուսանողներին։ Դրամարկղի միակ և գլխաւոր աղբիւրն են այն երեկոյթները, որոնք ամեն տարի տրվում են Պետերբուրգում։ Քանի որ ուսանողների թիւը մեծ չէր, կասսան կարողանում էր մի կերպ բաւարարութիւն տալ պահանջներին։ Բայց տարէց տարի բազմանալով ուսանողների թիւը, բազմանում էր և չքաւորների շարքը. բացի այդ, մայրաքաղաքում ապրուստի հանգամանքներն ևս դժուարանում էին։ Այնպէս որ այժմ այդ դրամարկղը ոչ մի հնարաւորութիւն չունի գոնէ կիսով չափ օգնութեան հասնել բոլոր դիմողներին, առաւել ևս, որ այս տարվայ երեկոյթը սպասված արդիւնքը չը տուեց։ Եւ ահա այն ուսանողները, որոնց միակ յոյսն էր դրամարկղը, որտեղից նրանք ստանում էին ամսական թոշակ, դրված են բոլորովին անել դրութեան մէջ, դեռ չենք ասում նրանց մասին, որոնք ստանալով կասսայից միանուագ փոխառութիւններ, կարողանում էին իր ժամանակին ուսման վարձ տալ և միւս համեմատաբար խոշոր պահանջները կատարել։

Պէտք է աւելացնել, որ կասսան, լինելով զուտ ուսանողական-ընկերական, տալիս է միայն փոխառութիւններ. խնդրողը պարտաւորվում է անպատճառ վերադարձնել վերցրած գումարը՝ կամ իր ուսանողութեան ժամանակ, կամ աւարտելուց յետոյ, երբ նա միջոց կունենայ։ Սակայն, ցաւօք սրտի պիտի ասել, որ այժմ, չը վերադարձրած. փոխառութիւնների գումարը հասնում է մօտաւորապէս 7000-ի, մի գումար, որի մի մասը այժմ անագին օգնութիւն կը հասցնէր։ Քանի անգամ մենք լրագրութեան միջոցով հրաւիրել ենք այն պարոններին, որոնք պարտք են մնացել կասսային, իրանց պարտքը վճարելու, բայց մեր հրաւէրները ոչ մի հետևանք չեն ունեցել։ Մենք փորձել ենք ուղղակի նամակով դիմել նրանց, որոնց հասցէները կարողացել ենք ձեռք բերել. մեր նամակները ևս, չնչին բացառութեամբ, անհետևանք են մնացել։ Կարծելով, որ մի գուցէ մեր նամակները տեղ չեն հասնում, մենք դրել ենք նամակներ վերադարձ ստորագրութեամբ (съ обратной росписской)։ Ստորագրութիւնները ստացել ենք, սակայն միայն ստորագրութիւն։

Այժմ մենք նորից դիմելով մեր նախկին ընկերներին, յիշեցնում ենք նրանց իրանց պարտականութիւնը. թող շտապեն շուտափոյթ ուղարկել կասսային հասնելիք գումարը (լիովին կամ մաս-մաս), որովհետև այժմ կարիքը մեծ է. թող չը սպասեն այնքան, երբ մենք ստիպված կը լինենք հրապարակ հանել նրանց անունները և հասարակութեան դատաստանին յանձնել նրանց վարմունքը։

Մեր հասցէն՝ С.-ПБ. Технол. Институтъ Іосифу Хандамирову.

Ի դիմաց հայ ուսանողութեան՝

Ց. Խանդամիրեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Դեկտեմբերի 7-ին

Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները վաղուց նոր եկեղեցու շինութեան կարիք էին զգում։ Հինը, բացի այն, որ փոքր է, նաև մութ, խոր ընկած, մասամբ և խոնաւ է։ Բացի այս անյարմարութիւններից, նա՝ գտնվելով գլխաւոր փողոցի վրա, ներկայացնում է մի ուրիշ մեծ անյարմարութիւն։ Կառքերի դղրդիւնը, ձիաքարշի զանգակների զողանջը, երթևեկող ժարդկանց բարձրաձայն խօսակցութիւնները շատ անգամ խլացնում են ժամերգութիւնը և ջերմեռանդ աղօթողը, փոխանակ Աստուծու խօսքի, փոխանակ մաղթանքների՝ լսում է փողոցային անվայել խօսակցութիւններ, լպիրշ հայհոյանքներ։ Ցաշորդները շատ են քարոզել այդ առիթով, ճռճռան ֆրազներով լոկ ցանկութիւն յայտնել, սակայն ոչ ոք մինչև այժմ խօսքից չէ անցել գործի։

Անցեալ հոկտեմբերի 11-ին Գանձակի յաշորդ Բագրատ վարդապետ Թաւաքալեանց՝ նոր երէցփոխ պ. Սիմէոն Բաբաքեխանցի հետ՝ ծխականների ժողով կազմեց յաշորդարանում, հոգաբարձուներ ընտրելու նոր կառուցանելի եկեղեցու շինութեան համար։ Ընտրվեցին պ.պ. Ս. Աֆանասեանց, Բ. Ստեփանեանց, Ց. Մէլիք-Բէգլարեանց, Մ. Նաբաթեանց, Ց. Լիսիկեանց և երէցփոխ Ս. Բաբաքեխանց։ Ինչպէս տեղեկացանք, կոնսիստորիայից արդէն ստացվել է վերոյիշեալ անձերի հաստատման հրամանը։

Հոգաբարձուներին մնում է շարունակել գործն այն եռանդով, ինչպէս սկսված է։ Նոր երէցփոխը, որ նաև յանձնաժողովի անդամ է, ամենից շատ պէտք է մտածէ եկեղեցու բարեգործութեան համար։ Հիմնվելով նրա աշխատասէր գործունէութեան վրա, կարծում ենք, որ մեր յոյսերը կարդարացնէ։

Մեր քաղաքը հայկական ներկայացումների կողմից մի սարսափելի ամայութիւն է ներկայացնում։ Վերջապէս մի ամբողջ տարի թատրոնի երես չը տեսնելուց յետոյ, սիրողների նախաձեռնութեամբ, դեկտեմբերի 9-ին, մի ներկայացում տեղի ունեցաւ քաղաքային կլուբի դահլիճում, մասնակցութեամբ Թիֆլիսից հրաւիրված կոմիկ Տէր-Դաւթեանցի և օր. Վարդիթերի։ Խաղացին Զէյնվի «Ընտանեկան գաղտնիք» կոմէդիան և «Դոկտոր Թաթոս» վոդէվիլը։ Երկուսն էլ կենդանի անցան. սիրողները պահպանում էին ներկայացման ամբողջութիւնը։ Պէտք է նկատել, սակայն, որ կին սիրողի պակասութեան պատճառով «Դոկտոր Թաթոսից» հանվեց մի ամբողջ տեսարան։ Զարմանալի անտարբերութիւն։ Նահանգական քաղաք, մօտ 10 հազար հայ բնակչով, համեմատաբար լի ինտելիգենտ տիկիններով և օրիորդներով—ու մի և նոյն ժամանակ այդպիսի կրճատում. մթթէ սա ներելի է։

Առանձին շնորհակալութեան արժանի է օր. Նունէ Խասապաբեան, որ կանանց ամայութեան մէջ աչքի է ընկնում իր հմտակրելի և եռանդուն մասնակցութեամբ։

Սիմ. Ցակոբեանց

ՆԱՄԱԿ ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌԻՑ

Վերին-Աղդան, դեկտեմբերի 6-ին

Մի ժողովրդի կրթութեան մասին ամենամիջոց գաղափար կարելի է կազմել նրա նիստ ու կացից ու սովորութիւններից. որքան աւելի մօտ է նա քաղաքակիրթ կեանքին, այնքան աւելի բազմակողմանի ու ժառանգին են դառնում նրա պահանջները, բարեկեցիկ ապրուստի եղանակն ու սովորութիւնները։ Ղազախեցի հայն էլ ունի իր ինքնուրոյն, պապերից ժառանգած ու սրբագործված կեանքի եղանակը, որ բնորոշում է նրան։ Ահա այդ կեանքի պատկերը։

Մտանենք նախ մի և նոյն հողի վրա ապրող մի գերմանացու կամ թէկուզ մալականի տուն, դիտենք նրա բնակարանը, կահ-կարասիքը, հագուստը, պարապմունքը և այնտեղից անցնենք մեր հայ-եղբօր խրճիթը... որպիսի տարբերութիւն այդ երկու տեսակի ժարդկանց մէջ... մինչդեռ կօլոնիստի կեանքում հէնց առաջին քայլից դուք նկատում էք որոշ չափով կիրթ ճաշակ և առաջադիմելու հսկայական ջանքեր, նայենք երկրորդին։

Մի բոլորակ, ըստ մեծի մասին գետնափոր, երդիկով լուսաւորվող և ամենահասարակ փայտէ կարասիներից զուրկ չէնք, որի կենտրոնը բռնում է օջախը—ահա մեր ղազախեցու բնակարանը. հէնց առաջին անգամից դուք կը տեսնէք, որ այդտեղ ամենուրեք գործել է ոչ թէ հրաշքներ արտադրող ժարդկային խելքը, այլ կոպիտ, վայրենի ոյժը։ Նրա օջախի չուրջն են բռնում թէ ընտանիքի անդամները, թէ նրա հիւրերը և՛ զրոյցի, և՛ ուտելու, և՛ քնելու ժամանակ։ Բացառութիւն կազմում են միայն հարսներն ու չափահաս աղջիկները, որոնք կուչ ու ծիկ անելով՝ այս ու այն անկիւնն են մրտնում։ Նոյն տանը, խոնաւ գետնի վրա, ամենավատառողջ պայմաններում տնքում է նաև նրա հիւանդը, եթէ ունի։ Գէթ մի հատիկ լուսաւոր սենեակ, թէկուզ ամենապարզ կահաւորութեամբ, չատ քչերի մօտ կը գտնէք. «Ցօ, թող Աստուածը փայ տայ, -խղճալանումն էլ կուտեմ», ահա մեծամասնութեան խոր համոզմունքի արտայայտութիւնը։ Ամենուրեք սակաւապետութիւն, դանդաղութիւն, անվարժութիւն և քարացած անտարբերութեան հետ նաև դատապարտելի աւանդապահութիւն։

Լեհացի վիպագրող Գրուս դաուն հեղնութեամբ է յիշում, թէ ինչպէս այնտեղ, Լեհաստանում, գիւղացին իր շապիկը փոխում է 7 օր մի, իսկ անկողինը տարին երկու անգամ։ Ի՞նչ կասէր, հապա նա, եթէ լսէր, որ մեր գիւղացին իր շապիկն ամիսներով չէ հանում, իսկ անկողինը հօ Աստուած գիտէ, փոխնորդ ունենալու մասին էլ քչերը հասկացողութիւն ունեն։ Լողանալ, սանրվելն էլ միայն յայտնի տօներին կամ հիւանդ ժարդկանց «սղնակ» բաներ են։ Տան մի պատի մօտ էլ կանգնած է լինում ողորմելի թարէքը, ծանրաբեռնված մի քանի պղնձէ յաճախ ժանգոտած թասերով, թոզոտ շշերով, փայտէ մատուցարան-խոնչաներով ու մի երկու «փաիր» պղինձներով—ահա նրա ամանեղէնների ամբողջ պաշարը։ Բաժակներ, ափսէներ, սամովար նորանոր են սկսում մուտք գործել և այն՝ զարմանալի դանդաղութեամբ։ Անցեալ նաև տանտիկնոջ մառանը, որ քչերն են ունենում, դարձեալ նոյնը—ընդհանուր անմաքրութիւն, սարք ու կարգի բացակայութիւն և վերին աստիճանի չը պահանջող ճաշակ։ Հետաքրքիր է, ինչպէս և ինչով է կերակրվում խեղճը։ Գարու և կորեկի ցամաք հաց, երբեմն պանրով, տարին մի քանի անգամ էլ տաք կերակուր—ահա միջին և աղքատ դասի ընդհանուր ուտելիքը. ուտելու էլ ոչ ժամ, ոչ ժամանակ։ Կը զարմանաք, անշուշտ, երբ տեսնէք մէկին մի հաց ու մի կտոր պանիր ձեռքին հատարակութեան մէջ կանգնած մի կողմից ուտում է, միւս կողմից վիճում. բայց դա մեղանում սովորական է։ Կանոնաւոր կերակուրներ նոյն իսկ քիչ կան, մեծ մասն անհամ, անճաշակ, դժուարամարս։ Անշնորհք է մեր ղազախեցին նաև զուարճութիւնների մէջ։ Այնպիսի հանդիսաւոր օրեր, ինչպէս Ծաղկազարդը, Զատիկը, Կաղանդը, Համբարձումն և այլն անցնում են նոյնքան անշուք, նոյնքան անհետ, որքան և սովորական օրերը։ Մինչդեռ, դիցուք, Երևանեան տափարակի գիւղացիների կեանքում դրանք մի-մի անմոռաց օրեր են, զարդարված անթիւ ժողովրդական պարերով, երգերով ու լէյլէներով։ Չը կայ այստեղ մի հատիկ երգ, մի հատիկ պար, որ այս ժողովրդի ծնունդը լինէր, սրան բնորոշէր. եղած պարերն էլ անտակտ ու անշնորհ ոստիւններ են։ Ամարային հրաշալի երեկոներին, երբ կեանքն իսկապէս գիւղում պէտք էր որոնել, դուք այստեղ գերեզմանական լռութեան կը հանդիպէք. չէք լսի և ոչ մի ձայն, որ գեղջուկի վիշտն ու կոյսի սէրը երգէր։ Կարծես այս ժողովուրդը սիրել, տանջվել, մեռնել չը գիտէ, կարծես սրա սիրտը նոյնքան սառն է, որքան և իր սարն ու ձորը, լեռն ու քարը...

Անցնենք նրա պարապմունքներին.—երկրագործութիւն, խաչնարածութիւն, առևտուր, մասամբ էլ մեղուաբուծութիւն։ Բոլորն էլ հին, աւանդական եղանակով ու ձևով, ահա այս բոլորը։ Ծանր, փայտէ տաժանելի գութաններից, մանգաղից, սրածայր քարերով շինված կամներից ու հինգմատեան հոսելիներից դուրս ուրիշ երկրագործական գործիքների մասին նա հասկացողութիւն չունի։ Իսկ հող պարարտացնել արհեստական եղանակով շատ հեռու է այսօրից, ի հարկէ, ընդհանրութեան համար։ Նայեցէք ոչխարներին, կովերին, եզներին—բոլորն էլ դաճաճ ու հասարակ տեսակից։ Վերջին ժամանակները միայն փորձեր են լինում նոր սիստեմի փեթակներով մեղուներ պահել, այն էլ շատ քիչ տեղերում։ Պարտէզներ ու այգիներ շատ քիչ կան, եղածներն էլ նոյնքան անմշակ, բնութեան կամքին թողված, որքան և մեր անտառների կաղնիներն ու ճաճարները։ Բանջարանոցներ հօ շատ քչերն ունեն։ Մինչդեռ ամենափոքրիկ գիւղում և ամեն ոք կարող է մեծ քանակութեամբ և ամենաբնտիր տեսակի արժէք ու բանջարներ ստանալ, մեր միամիտ գիւղացիները բաւականանում են միայն ցուրիչ երկիրներում տեսածները զարմանքով պատմելով։ Պէտք էր ասել, որ այս ժողովուրդը գէթ կրօնական ֆանատիկոսութեան հասած ջերմեռանդութիւն պիտի ունենար, բայց այդ էլ է պակասում նրանում։

Մի խօսքով, մեր ղազախեցի գիւղացին դեռ շատ ու շատ ողորմելի վիճակում է...

Ց. ք. Սաւիկեան

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Դեկտեմբերի 13-ին

Սղնախի հայ օրիորդներին կարելի է բաժանել երկու դասակարգի՝ «զուրս եկած» և «տընային» աղջկիկներ։ Առաջիններն արտաքուստ ընդունել են լուսաւորութեան ձևերը, վայելում են որոշ աստիճանի ազատութիւն և ամուսնական հարցում ունեն ձայն։ Երկրորդները զուրկ են առաջինների շնորհներից և նրանց «բարի բաղդը» բացառապէս վերապահված է իրանց ծնողներին։ Բաւական է, որ աղջկայ հայրը (մայրը կրաւորական դեր է կատարում) հաւանէ փեսացուին ու գործը վերջացած է. աղջիկը իրաւունք չունի և անկարող է հակառակվել, որովհետև այդպէս է պահանջում սղնախեցու լոգիկան։ Իսկ ինչ հայեացքներով են ծնողները ընտրում իրանց աղջկայ համար փեսացու։ Այստեղ հարցը միմիայն նիւթականի մէջն է. բաւական է, որ փեսացուն ունի կարողութիւն, կարող է նիւթապէս ապահով պահել ամուսնուն, իսկ երիտասարդի մտաւոր և բարոյական արժանաւորութիւնները—յաճախ և տարիքը—ոչ մի դեր չեն կատարում։ Պարզ է, այսպիսի բռնակալ և նիւթապաշտ հայեացքների շնորհիւ՝ յաճախ տեղի կունենան անհամապատասխան ամուսնութիւններ։ Եւ լինում են։ Անցեալներս մի գիմնազիստ փոխեց մի ինտելիգենտ փեսացուին՝ կարողութիւն ունեցող ոչ ինտելիգենտ վաճառականի հետ, չը նայելով որ օրիորդը սիրում էր առաջինին և խօսք էր տուել նրան ամուսնանալու։ Այս օրերս էլ մի 20 տարեկան օրիորդին ամուսնացրին 50 տարեկան ալրի մարդու հետ։ Մի ուրիշ մատաղահաս հայ օրիորդը նշանվեց մեր ռուս չինովնիկի հետ։ Այս օրիորդը սակայն պատկանում է առաջին դասակարգի օրիորդների թիւին, խօսում է հայերէն (հայերէն իմացող օրիորդներ Սղնախում քիչ կան) ու կարդում հայերէն գրքեր։

Դեկտեմբերի 7—9-ին երեք օր չարունակ, մեծ ձիւն եկաւ, ծածկելով գետինը $1^1/_2$ արշին բարձրութեամբ։ Հաղորդակցութեան ճանապարհները մի քանի օր փակվեցին. այժմ հաղորդակցութիւնը կատարվում է դանդաղ և դժուարութեամբ։ Գօստը գալիս է ու գնում սահնակներով և ուշանում է ճանապարհին։ Կենսական միջոցների գինը բարձրանում է. վաճառականներն օգուտ են քաղում յարմար դէպքից։ Ի՞նչ պէտք է լինի խեղճ աղքատների վիճակը...

Քաղաքային ինքնավարութեան նիստերը չեն կայանում. չը նայելով քաղաքագլխի ջերմ հրաւէրներին, ձայնաւորները դարձեալ չեն գալիս. անցեալ օրը նշանակված էր տասներորդ անգամ նիստ, բայց կրկին չը կայացաւ։ Ակնայայտ է, որ այսպիսի դրութիւնից քաղաքային գործերը յետ կը մնան, բայց ուշադրութիւն դարձնող չը կայ։ Կարծում ենք, որ քաղաքագլուխն իրաւունք ունի տուգանքի ենթարկել յաճառ ձայնաւորներին, բայց նա չէ օգտվում իրան վերապահված իրաւունքից, երևի չը ցանկանալով վիրաւորել նրանց... Ի դէպ. այժմ մեծ ձիւնով ծածկված է մեր միակ բուլվարը, որտեղ կարող ենք ձմեռը մեն գալ։ Սղնախի փողոցները ձիւնից երբէք չեն մաքրվում. ինքը բնութիւնը պէտք է մաքրէ նրանց։ Բայց բուլվար մաքրելու պարտաւորութիւնը քաղաքային վարչութեան վրա է։ Եթէ դիմէք այս հարցով դուսայի ղեկավարներին, կը ստանաք սովորական պատասխան. «քաղաքը միջոց չունի»։

Դեկտեմբերի 5-ին, ռուս սիրողները հասարակական ժողովարանի դահլիճում մի ներկայացում տուին՝ յօգուտ հրդեհից վնասված մի վրացի իշխանուհու։ Խաղացին երկու վոդէվիլներ։ Չը նայելով սիրողների ջանքերին, ներկայացումը չը գրաւեց հասարակութեան հետաքրքրութիւնը. փոքրիկ դահլիճը կիսով չափ դատարկ էր։ Մուտքը եղել է 48 ք., որից ծախսը հանած՝ մնացել է յօգուտ հրդեհեալի մօտ 20 ք.։

Ց. Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բժշկապետ Ց. Դասպարեանց, անցեալ տարիների նման, այս տարի ևս ուղարկել է մեզ հարիւր բուբլի, որպէս զի 1900 թ.ի «Մշակ» լրագրի տասն օրինակը ուղարկենք ձրիապէս այն տեղերը, որտեղ նրանք ուղարկվում կին անցեալ տարի։ Համաձայն պ. բժշկապետի ցանկութեան այդ հանդարները կուղարկենք՝ 1) Մանպէլիէի հայ ուսանողներին. 2) Ղազախի գաւառի Վերին-Աղդան գիւղի դպրոցին. 3) Սալմաստի Փայաջուկ գիւղի «Բաֆֆի» գրադարանին. 4) Գանձակի արհեստաւորաց դպրոցի աշակերտներին. 5) Նոր-Նախիջևանի Մեծ-Սալա գիւղի օրիորդաց դպրոցին. 6) Զուլֆայի հայոց եկեղեցու երէցփոխանին՝ հայ հասարակութեան ընթերցանութեան համար. 7) Բանանց գիւղի հայ հասարակութեան, 8) Ալէքսանդրոպոլի գաւառի Մուսալուխլի գիւղի հայ կաթոլիկների դպրոցին. 9) Իրիվանի հոգևորականի հայ ուսանողներին, և 10) Սալմաստի Ղալասար գիւղի հայոց դրադարանին։

—

Մեզ հաղորդում են, որ հողային բարեգործների դեպարտամենտի դիրեկտոր Փիլինսկի կատարեց մի պաշտօնական ճանապարհորդութիւն դէպի Մուղանի անապատը և տեղնուտեղը ուսումնասիրեց տափարակի ոռոգութեան հարցը։ Մասնաւոր անձանց արած փորձերը համոզեցին Փիլինսկուն, որ անապատի շատ տեղերը կարելի է ջրել համեմատաբար քիչ ծախքերով։ Զուր անցկացրած տեղերում հողը շատ բարեբեր է և տալիս է անհաւատալի առատ բերք։

—

«Եղբայրք Բուդաղեաններ»-ի առևտրական տու-

նը ուղարկել է մեզ Բագուից հարիւր ռուբլի՝ հայալսարանական և մասնագիտական կրթութիւն ստացող չքաւոր հայ ուսանողների օգտին։

—

Ստացանք Կովկասեան արօտատեղերի երկու նոր ուսումնասիրութիւններ, որ հրատարակել է երկրագործութեան մինիստրութեան Կովկասեան լիազօրի դիւանատունը և որոնք վերաբերում են Ղարաբաղի և Շահդաղի լեռնային արօտներին։ Առաջին աշխատութիւնը կրում է «Карабакскія лѣтнія пастбища» վերնագիրը։ Հեղինակն է Սկիբիցկի։ Աշխատութիւնը պարունակում է 203 մեծադիր երեսներ և մի աշխարհագրական քարտէզ։ Երկրորդ աշխատութիւնը, որ կրում է «Шагдагскія казенныя лѣтнія пастбища Кубинскаго уѣзда» վերնագիրը, բաղկացած է 29 մեծադիր երեսներից։ Հեղինակն է Գլասկո։

—

Բարեգործ մարդկանց ուշադրութիւն ենք հրաւիրում այրի Վարդուհի Սուրզունեանցի նեղ դրութեան վրա. ապրելով մի խոնաւ բնակարանում, առանց որ և է օգնութեան, նա կորցրել է իր մի հատ որդուն, ինքը ցաւագար է և կարեկից մարդկանց գթասրտութեան է դիմում։ Այրին ապրում է Բեթլեհէմի ս. Աստուածածին եկեղեցու բակում, տուն № 85։

—

«Од. Листокъ» լրագիրը հաղորդում է, որ հռչակաւոր նկարիչ Ֆ. Այվազովսկու առողջութիւնը վերականգնվեց։ Նա արդէն սկսել է կրկին աշխատել և ներկայում մի մեծ պատկեր է նկարում։

—

«Сѣв Курьеръ» լրագրում կարդում ենք. «Դեկտեմբերի 11-ին կառավարչական սենատը առաջին և վճռաբեկ դեպարտամենտների միացեալ ատեանում լսեց «Новое Слово» ամսագրի նախկին հրատարակիչ Միխայիլ Սեմենովի գանգատը, որով նա պահանջում էր 80 հազար ռուբլի ներքին գործերի մինիստր Ի. Լ. Գոռեմիկինից, արդարադատութեան մինիստր Ն. Վ. Մուրավիեվից, ս. սինոդի օբէր-պրոկուրոր Կ. Պ. Պոբեդոնոսցևից և ժողովրդական լուսաւորութեան նախկին մինիստր կոմս Ի. Դ. Դէլեանովի ժառանգներից։ Գանգատուորի հաւատարմատարը՝ երդուեալ հաւատարմատար Ա. Ա. Նիկոնով գտնում էր, որ առանձին խորհրդակցութեան որոշումը «Новое Слово» ամսագիրը փակելու մասին, որ հրատարակվեց «Правительственный Вѣстникъ» լրագրում 1897 թի դեկտեմբերի 17-ին, խախտում է ցենզուրայի և մամուլի վերաբերեալ կանոնադրութեան 148-դ յօդուածը, որի համաձայն, պարբերական հրատարակութիւն դադարեցնելու կարգադրութիւնից առաջ պէտք է երեք անգամ նախազգուշութիւն տրվի։ Գատախնամատները, արդարադատութեան մինիստրը և ս. սինոդի օբէր-պրոկուրորը, գրաւոր բացատրութիւն ներկայացրին, որոնց մէջ բացատրեցին, որ ներքին գործերի մինիստրը «Новое Слово» ամսագիրը փակելու համար առանձին խորհրդակցութեան արած որոշումը Բարձրագոյն բարեհայեցողութեանն էր ներկայացրել և որ այդ գործի վերաբերեալ խորհրդակցութեան զեկուցման վրա Թագաւոր Կայսրը բարեհաճեց դրել. «Համաձայն եմ»։ Ի նկատի ունենալով այդ, կառավարչական սենատը որոշեց՝ ազնուական Միխայիլ Սեմենովի խնդիրը թողնել առանց քննութեան։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 14-ին երաժիշտ Նիկողայոս Տիգրանեանց, ջութակահար Վասիլիևի մասնակցութեամբ, տուեց մի կոնցէրտ մեր քաղաքում։ Կոնցէրտի պրոգրամը շատ աջող էր կազմված, և հասարակութիւնը շատ անգամ կրկնել տուեց պ. Տիգրանեանին նրա հեղինակութիւններից կտորներ։ Սպասելի էր, որ պ.պ. Տիգրանեանի և Վասիլիևի նման Կովկասում յայտնի երաժիշտների անունները պէտք է մեծ բազմութիւն գրաւէին թատրոն, բայց այդպէս չէր. շատ քիչ հասարակութիւն կար թատրոնում, այնպէս որ խեղճ երաժիշտները օգուտի փոխարէն, դեռ վնաս էլ ունեցան. ահա ձեզ Բագուի գեղարուեստը գնահատող հասարակութիւնը...»

—

Նույնը գաւառի ԹԱՂԼԱՐ գիւղից մեզ գրում են. «Մայիս 7-ին ու 8-ին անընդհատ ձիւն եկաւ, որի խորութիւնը հաւասար էր 1 արշինի։ Անասունների ապրուստի պակասութիւն է այս տարի, իսկ եթէ ձիւնը երկար մնայ, այն ժամանակ հաւանական է, որ անասունները քաղցածութիւնից կոտորվեն։ Այդ էլ մի ցաւ գիւղացիների համար...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, նոյեմբերի 28-ին

Երէկ, մայիս 27-ին, «Հայկազեան» վարժարանի ուսուցչական խումբը նոյն վարժարանի թատրոնական դահլիճում տուեց մի դպրոցական գրական-երաժշտական երեկոյթ, որ գրաւել էր փոքրաթիւ հասարակութիւն։ Զարմանալի է մեր ժողովրդի անտարբերութիւնը. միևնոյն երևոյթն է նկատվում այստեղ և ամեն տեղ։ Ամեն բան լինի, բայց մեզնից մի կոպէկ չը ծախսվի—հանառաջադիմութեան ձգտելու հոչակ վայելող հայերի յատկանիշը։

Երեկոյթին պ. Հ. Առաքելեանց կարդաց մի դասախօսութիւն՝ «Քսաներորդ դարը» վերնագրով, որ արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Ցանկալի է, որ այդպիսի դասախօսութիւններ յաճախ տեղի ունենան, որոնք մի կողմից կը սնափեցնեն թմբած հասարակութիւնը և կրթիչ ազդեցութիւն կունենան, միւս կողմից ժամանակ կը տան նրան գոնէ մի քանի բոպէ վերանալ առօրեայ գծուծ հոգիների աշխարհից դէպի գաղափարական աշխարհը, որ հոգեկան բաւականութիւն և սնունդ է տալիս մարդուն։ Ցանկալի են դասախօսութիւնները այդ իսկ տեսակէտից։ Սակայն այստեղի ժողովրդի անտարբերութիւնը դատապարտելի է. քանի որ Թէհրանի մայր կեանքում, ուր հասարակական զուարճութիւններ չը կան և ուր հայերը կղզիացած են ապրում, կարված միմեանցից՝ առիթը ձեռքից չը պէտք է բաց թողնել միմեանց հետ շփվելու և հոգեկան զուարճութիւն զգալու, փոխանակ բանտարկեալի նման տունը նստելու և բժշկանքներով պարապելու—մի յատկութիւն, որ խոր արևելեան կնիք է կրում իր վրա և որ դարձեալ յատուկ է եւրոպական քաղաքակրթութեան ձգտող հային։

Երեկոյթի վերջում ուսուցչական խումբը խաղաց «200,000» վոդէվիլը, որով և վերջացաւ երեկոյթը։ Հանդիսատես հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ ուսումնարանից։ Ցոյս ունենք, որ այսուհետև այդպիսի երեկոյթներ չուտ-չուտ տեղի կունենան, որոնց բարերար ազդեցութիւնը անուրանալի է, և հասարակութիւնը կը շտապէ քաւել իր յանցանքը՝ յաճախելով երեկոյթներին և իր լուսաներով օգնելով դպրոցին, յօգուտ որի տրված էր և յիշեալ երեկոյթը։

Խ. Բաբայեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են, որ իբր թէ Բ. Դուռը երկիւղով է սպասում յունվարի 1-ին (նոր տոմարով)։ Այդ օրը լրանում է Ռուսաստանին պատերազմական տուգանք վճարելու ժամանակամիջոցը, որ կազմում է ընդամենը 472,000 ֆունտ։ Մինչև այժմ, սակայն, հաւաքված է միայն 158,000 ֆունտ, և հազիւ թէ մնացած գումարը կարողանան հաւաքել։

—Կոլնզոից հեռագրում են Լօնդոն, որ այնտեղ ապատաժրութիւնը սպառնալի կերպարանք է ստանում և անհրաժեշտ է համարվում անյապաղ 9-դ և 10-դ դիվիզիոնների ուղարկելը, առանց որոնց անհնարին է աջողութիւն ունենալ։

—«Voss. Zeitung» լրագրին հեռագրում են Մարսէլից, որ սուլթանի փեսայ Մահմուդ փաշային սպասում էին այնտեղի կայսրանում մի քանի երիտասարդ թիւրքեր և թիւրքաց հիւպատոսը, որը և յանձնեց Մահմուդ փաշային սուլթանի նամակը։ Մահմուդը ստացաւ նամակը, բայի հիւպատոսի հետ շատ կոպիտ վարվեց և ապա կարճ կտրելով խօսակցութիւնը, հրամայեց նրան հեռանալ։ Մի քանի թղթակիցներին, որոնք սպասում էին նրան, ասաց, որ շատ հաւանական է, որ երկար ժամանակ չը մնայ Ֆրանսիայում, որպէս զի տեղիք չը տայ թիւրիմացութիւնների։ Սուլթանի մասին նա խիստ լեզու բանեցրեց։

—«Daily News» լրագիրը հաղորդում է, որ Բուլլէրի կրած պարտութեան լուրը սաստիկ յուզմունք պատճառեց պատերազմական մինիստրութեան մէջ, որովհետև դրա նախընթաց օրը հեռագիր ստացվեց գեներալ Բուլլէրից, որի մէջ նա գրում էր, թէ բօէրներին երկու կրակի մէջ է դրել և յոյս ունի նրանց բոլորովին ոչնչացնել։

—Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, թէ մի ինչ որ յոյն քահանայ, ըստ երևոյթին խելագար, Դմիտրից Խրիստէ անունով, 63 տարեկան, այս քանի օրերս մահմեդականութիւն է ընդունել։

—«Berliner Tageblatte» լրագրի զինուորական թղթակիցը, որ իր ժամանակին նախագուշակեց անգլիացիների անաջողութիւնները, այժմ, Բուլլէրի կրած պարտութիւնից յետոյ, ասում է, որ անգլիացիք պէտք է աշխատեն իրանց հեղինակութիւնը վերականգնեցնել Հարաւային Աֆրիկայում։ Եթէ այդ չաջողվի նրանց, ասում է թղթակիցը, այն ժամանակ նրանք կարող են բոլորովին զրկվել Հարաւային Աֆրիկայի կալոնիաներից։ Դրա նշանները արդէն այժմեանից երևում են։

—«Frankfurter Zeitung» լրագրի Պարիզի թղթակիցը հեռագրում է, որ այնտեղի բարձր շրջաններում դրականապէս հաւատացնում են, թէ Անգլիան սկզբունքով պատրաստ է խաղաղութեան բանակցութիւններ վարել։ Նա յոյս ունի, որ երբ Ռոբէրտս և Կիտչենէր գեներալները կը հասնեն պատերազմի դաշտը, նրանց կաջողվի վերականգնեցնել Անգլիայի պատիւը, և այն ժամանակ Անգլիան կառաջարկէ խաղաղութեան պայմանները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

16 դեկտեմբերի

ՍՏԷՐԿՍՏՐՈՄ։ «Բէյտէրի գործ.»։ Վերջին տեղեկութիւնների համաձայն՝ Դօրդրէխտի մօտ տեղի ունեցած երէկվայ ընդհարման ժամանակ մասնակցել են ընդամենը 30 բօէր։ Մէկ սայլ և մեծ քանակութեամբ հրացաններ աւար վերցվեցին։ Դրութիւնը անփոփոխ է։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս հաղորդվում են «Բէյտէրի գործակալութեան» Գրէտօրիայում, Լօրէնցօ-Մարկէզիայի վրայով, դեկտեմբերի 10-ին սեփական թղթակիցներից, որոնք գտնվում են Մօդէր-Ռիվերում, տեղեկութիւն է ստացվել, որ երեքշաբթի առաւօտեան և չորեքշաբթի օր՝ բրիտանական մի թնդանօթ ռմբակոծում էր բօէրների բանակը։ Նրանց կողմից պատասխանեցին միմիայն մի քանի անգամ թնդանօթաձգութեամբ, որը, լուրը հաղորդելու միջոցին, դեռ ոչ մի վնաս չէր հասցրել։

ՋԻՎԷԼԷԹ։ «Բէյտերի գործ.»։ Հետախուզութիւններ կատարողները հաղորդեցին, որ Տուգելա գետից դէպի հիւսիս գտնվում են շատ բօէրներ։ Անգլիական զօրաբաժինը, լորդ Դէնոնպուրի հրամանատարութեամբ, իսկոյն դուրս եկաւ և յարձակում գործեց։ Բօէրները, հէնց որ տեսան անգլիացիներին, յետ քաշվեցին դէպի գետի միւս ափը, թողնելով անգլիացիների ձեռքին մօտ 500 տաւար։

ՄՕՍԿՎԱ։ Երէկ Ուսպէնսկի մեծ տաճարում վառվեց թաղիքով փաթաթված փայտէ ծխնելոյզը։ Հրդեհի միջոցին տաճարը լցված էր ծուխով։

ԳՐՕԶՆԻ։ Վլադիկավկազի երկաթուղու նաւթազտական բաժինը այրվեց։ Վնասը հասնում է 150 հազարի։ Գործը կը դադարի երկու և կէս ամսով։

ՊՕԼՏԱՎԱ։ Այսօր նահանգական դատարանի բնակարանում բաց արաւ իր նիստերը Կիէվի դատաստանական պալատի բաժանմունքը, Պօլտավայի կոնսիստորիայի քարտուղար Կոմարովի սպանութեան գործը քննելու համար։ Սկիտսկիների ներկայ գործը երրորդ անգամն է քննվում։ Առաջին անգամ քննվեց Պօլտավայում, որտեղ նրանք արդար ճանաչվեցին, երկրորդ անգամ—Խարկովում, որտեղ նրանք մեղադրվեցին։ Կանչված 120 վկաներից չեն ներկայացել 19-ը։ Իլարիոն եպիսկոպոսը հաղորդել է պալատին, որ հիւանդութեան պատճառով չէ կարող ներկայանալ։ Պրոկուրորի պահանջի և պաշտպանի խնդիրքի համաձայն, որոնք պնդում էին, թէ աչքի առաջ ունենալով տարվայ այժմեան միջոցը, անհնարին է քննութիւն կատարել այն տեղի վրա, ուր գտնվել է Կոմարովի դիակը, պալատը յետաձգեց գործի քննութիւնը։

ՇԱՆԴՀԱԵ։ «Բէյտէրի գործ.»։ Պէկինի դիպլոմատիական մարմնի ատաղը հեռագրել է այստեղի հիւպատոսին, թէ օտարազգի անձանց քննութիւններ հաստատելու համար արտօնութիւններ չնորհելու հրովարտակը հրատարակված է։

ԿԱԼԿՈՒՏԱ։ «Բէյտէրի գործ.»։ Փոխարքայի մօտ երէկվայ տեղի ունեցած ճաշկերոյթի ժամանակ, Կրզոն բաժակ առաջարկեց Հէյդերաբադի նիզամի կենացը։ Նիզամը պատասխանեց, թէ իր կարողութիւնը, զօրքը և սուրը պատրաստ են միշտ պաշտպանելու պետութիւնը և թագուհուն։ Գվելիօրի մարաջը թոլութիւն է խնդրել ուղարկելու Հարաւային Աֆրիկա զօրք և ձիեր։

ԿԵՕԼՆ։ «Köln. Zeit.» լրագրին հաղորդում են Բրիդբէնից, դեկտեմբերի 8-ից, որ բրիտանական Նոր-Գվինէայից վատ լուրեր են հասնում։ Զը նայելով նոր նահանգապետի ջանքերին խաղաղութիւն պահպանելու, պատուսների մի քանի մեծ ցեղերի մէջ ներքին լուրջ երկպառակութիւններ են ծագել, որոնց մասնակցում է արդէն գաղութների մեծագոյն մասը։ Ասում են, որ հիւսիսային մասում արդէն հրդեհել են եօթը գիւղ։ Միսիոնարներին լուրջ վտանգ է սպառնում։ Ոստիկանութիւնը շատ թոյլ է տեղացիների վերաբերմամբ։

17 դեկտեմբերի

ՊՕԼՏԱՎԱ։ Սկիտսկիների գործը յետաձգվեց մինչև ապրիլի 27-ը։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրին Էէդի-Սմիտից հաղորդում են, դեկտեմբերի 7-ից, որ քաղաքը ամենևին յուսահատ դրութեան մէջ չէ. ուտեստի պաշար կայ դեռ երկու ամսվայ համար։ Մի քիչ կարող էր վախեցնել խոտի պակասութիւնը, բայց յորդառատ անձրևների շնորհիւ բանակի շուրջը սկսում է խոտ բուսնել։ Թշնամու թնդանօթաձիգ զօրքի պատճառած կորուստները վերջին օրերը աւելի զգալի են դառնում, որովհետև թշնամին աւելի ճիշդ է որոշում տարածութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, դեկտեմբերի 28-ին կուղարկվեն 7 դիվիզիոները։

ՊԱՐԻԶ։ Բարձրագոյն դատարան։ Սկսվեցին պաշտպանողական ճառերը։ Դէրուլէդ հրաժարվեց պաշտպանութիւնից փաստաբանի միջոցով։ Նիստը փակվեց։

ՀԱԱԳԱ։ Պարիզի գերմանական դեսպան իշխան Միւնստէր Գերմանիայի անունից ստորագրեց այստեղ խաղաղութեան միջազգային կոնֆերէնցիայի բոլոր որոշումները, պայմանագրերը և դէկլարացիաները։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրին հաղորդում են Լօրէնցօ-Մարկէզէից, դեկտեմբերի 13-ից, որ Տրանսվալից ուղարկված այստեղ գտնվողների թուում դուրս է գալիս որ կան ազգային բանկի դիրեկտորներ Գուսսին և Վօլֆ։ Բանկի այստեղի բաժանմունքի կառավարիչը բրիտանահպատակ Նէնի Լլոյդն է։ Տրանսվալեան կառավարութիւնը դիտաւորութիւն ունի նրա տեղ նշանակել հանրապետութեան մի քաղաքացի, բայց վարչութեան ուրբաական խորհուրդը, որը դրամագլխի կէսի ներկայացուցիչն է, դրան դիմադրում է։ Ուտեստի պաշար և առղմական մթերքներ գնելու ժամանակ եւրոպական ցամաքի վրա, բօէրները ստիպված են լինում հանդիպել մեծ դժուարութիւնների. նրանք դրա համար ստիպված են ոսկու ձուլածոներ ուղարկել Եւրոպա, իսկ այդ ոսկիները կարող են ընկնել անգլիական պատերազմական նաւերի ձեռքը։ Ոսկին բեռնելը մանաւանդ մեծ վտանգ է ներկայացնում, որովհետև այդ գործողութիւնը պէտք է կատարվի այն բանկը, որի դուռն կանգնած է անգլիացի։

ԴՈՒՐԲԱՆ։ Գերմանական ֆէբմէր Ստարկէ և պատոր Դէբրոս, որը հանանվէրեան միսիոնէրական կայարանների կառավարիչ էր Նատալում, կալանաւորվեցին՝ մեղադրվելով այն բանում, որ նրանք յարաբերութիւններ են կապել թշնամու հետ, երբ նա կանգնած էր Մօդդէր-Ռիվէրի ափերի վրա։ Նրանք երկուսն էլ դիմեցին գերմանական հիւպատոսին՝ պաշտպանութիւն խնդրելով։ Նրանք արդէն հարցափորձի ենթարկվեցին և ուղարկվեցին Էսկոթա, ուր բանտարկվեցին։

ԼՕՆԴՕՆ։ Կապշտադից, դեկտեմբերի 15-ից պաշտօնապէս հաղորդում են. «Մէտուէն հեռագրում է, որ անցեալ գիշերը Մագդէբսֆօնտեինի հարաւային կողմից բօէրները սկսեցին սաստիկ կրակ թափել. այսօր առաւօտ նաւային թնդանօթներով սկսվեց թնդանօթաձգութիւն Մագդէբսֆօնտէնից դէպի արևմուտք։ Հեծելազօր բրիգադան հետախուզութիւն կատարեց հիւսիս-արևելեան ուղղութեամբ. Էնդելենից դէպի հիւսիս հանգստութիւն է տիրում։ Եւ որովհետև ուտեստի պաշարի պակասութիւն է զգացվում, Մէտուէն իր բանակում շուկայ սարքեց ուտելիքներ ծախելու համար։

«Times» լրագրին հաղորդում են Լօրէնցօ-Մարկէզէից, դեկտեմբերի 10-ից, որ թէպէտև երկաթուղիով հնարաւորութիւն կայ միայն փոքր քանակութեամբ բեռներ ուղարկել Պրէտորիա, այնու ամենայնիւ, ուտեստի բոլոր պաշարները, ինչ կարելի է ձեռք բերել, բօէրները առնում են։ Գները 25 տոկոսով բարձրացան։ Եօհանէսբուրգից ստացված տեղեկութիւնների համեմատ, այնտեղ մի քանի առարկաների գները 100 տոկոսով թանգացել են։ Ներքին առարկաներ հասարակ ոչ մի տեղ չէ կարելի գտնել։ Զօրքի զինուորական վարչութիւնը մթերքների մեծ պաշար ունի, բայց բօէրների ընտանիքները նեղութիւն են կրում։ Գիները սաստկում են, որովհետև զուրկ են լաւ խնամատարութիւնից։ Հանքերից համարեա ոչ մի օգուտ չեն քաղում։

ՋԻՎԷԼԷԹ։ Այսօր սկսեցին գործել ծանր թնդանօթները, որովհետև թշնամին չարունակում էր ընդլայնել իր ամրութիւնները, և ստիպեցին բօէրներին յետ քաշվել. նրանք փոխան սարերի ետևը։ Աւելի ուշ կրկին երևացին թշնամու փոքր զօրաբաժինները, բայց նրանց իսկոյն

սկսեցին ռմբակոծել: Թշնամին առաւօտից ռումբեր է արձակում Իզիմբուլլան սարից Լէդի-Սմիթ, բայց բրիտանական թնդանօթներով զօրքը կրակին չէ պատասխանում: Ֆօրկե-Կիլիէում հիւանդանոց է սարքված բօէրների համար, այդ պատճառով բրիտանական թնդանօթաձիգ զօրքին հրամայված է ռումբեր չարձակել այդ ուղղութեամբ: Այստեղից երեք մղոն հեռաւորութեան վրա տեղի ունեցած կռւի մէջ սպանվեցին 9 բօէրներ և թշնամու վեց սայլեր ընկան անգլիացիների ձեռքը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ. Գ. Մ-ին. Մենք արդէն յայտարարել ենք, որ ապառիկ բաժանորդագրութիւն չենք ընդունում. կարող էք վճարել մաս-մաս:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԽՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷԴԷՎԱՆՕՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից:

Առաւօտները՝

Վ. Ի. ՃԻՃԻՆԱՁԷ—ատամների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Դ. Կ. ԷՐԻՍԹՕՎ—վիրաբուժութեան. 10—12 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օր. $10\frac{1}{2}$—12 ժ.
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ. 12—1 ժ.
Ն. Ձ. ՈՒՄԻԿՕՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. $12\frac{1}{2}$—$1\frac{1}{2}$ ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—վեներական, մորթի և միզառութ. հ. $1\frac{1}{2}$—2 ժ.
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—նեարդային և էլեկտրոթերապիա, 1—2 ժ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԷՎ—ականջի, կոկորդի, քթի հ. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ օր. 2—3ժ.

Երեկոները՝

Դ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.
Ս. Ի. ՎԱՑԱՁԷ—ներքին հ. և մասսաժ, 6—7 ժ.

Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար:

Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով:

Նիկօլաեվսկայա փողոց, Վօրօնցովի արձանի հանդէպ, տ. Սազինովի, № 11.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

16—20 Միխայիլ Գէդէվանով

Թիֆլիսի տոհմական պատուաւոր քաղաքացի Ալէքսանդր Յովհաննիսեան Մանթաշեան, քաղաքում նաւթի և փայտի թանգանալու պատճառով, յանձնել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան հինգ վագօն ցիստերն նաւթ, մինչև 3500 պուդ ծանրութեամբ, քաղաքի ամենաաղքատ բնակիչների վրա ծախելու պուդը մի բուբլիով, այն պայմանով, որ դրանից գոյացած գումարով անվճար փայտ և ածուխ աղքատներին ձրի բաժանելու համար: Ի նկատի ունենալով այդ՝ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն Թիֆլիսի ազգաբնակութեան, որ վարչութիւնը դեկտեմբերի 17-ից սկսած՝ քաղաքի չքաւոր ազգաբնակութեան վրա կէրօսին ծախելու է քաղաքի հետևեալ 11 կէտերում.

1) Նաւթլուղում, Բէյտէրօվսկայա փողոցի վրա, ջրանցքի բուտկայում:
2) Կախէթինսկայա հրապարակի վրա, Առևտրական ուսումնարանի բուտկայում:
3) Չուղուրէթում, ռուսաց Նիկօլաեվսկայա եկեղեցու մօտ, ջրանցքի բուտկայում:
4) Աւճալեան հրապարակի վրա (Մօլօկանսկայա) ջրանցքի բուտկայում:
5) Նախալօվկայում, ջրանցքի բուտկայում:
6) Դիդուբէյում, 2-րդ գիշերային ապաստարանում:
7) Օլգինսկայա և Ցխնեաուսկայա փողոցների անկիւնում, ջրանցքի բուտկայում:
8) Մթածմինդայում (Դավիդօվսկայա հրապարակ) ջրանցքի բուտկայում:
9) Մուխրանսկայա փողոցի վրա, ջրանցքի բուտկայում:
10) Մէյդանում, քաղաքային կշեռքի մօտ:
11) Վօրօնցովսկայա փողոցի վրա՝ Զիթախօվի գործարանի դիմաց, առաջին գիշերային ապաստարանում:

Նաւթը կը ծախվի ֆունտը $2\frac{1}{2}$ կոպէկով:—Ամեն մէկը կարող է ստանալ միայն 4 ֆունտ: Կը սկսվի ծախել առաւօտեան 12 ժամից և կը շարունակվի մինչև երեկոյեան ժամի 5-ը: Ձրի փայտ բաժանելու մասին կը յայտարարվի առանձին: 2—3

ԲԺԻՇԿ Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Ընդունելութիւն բերանի խոռոչի և ատամների հիւանդութիւնների: Ամեն օր 10—2 ժամ առաւօտեան և 4—$7\frac{1}{2}$ ժամ երեկոյեան. իսկ կիրակի օրերը՝ 10—2 ժամ: Վելեամինեան փողոց, տուն № 2, երկրորդ մուտքը Երևանեան հրապարակից:

(ե. հ. շ.) 5—10

ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի օր, դեկտեմբերի 23-ին

✦ՀԱՄԵՐԳ✦

Խ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

Մասնակցութեամբ օր. Ալիխանեանի, պ.պ. Վարդիկեանի, Ղարագեօզեանի և 70 հոգուց բաղկացած խմբի:

1—4

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ

Տօների առիթով նոր լոյս տեսան

ԱՆԴԱՐԴ ՀԱՆԷՍԸ ԵՒ ՊՍՏԻԿ ՈՒ ՉՍՏԻԿ

Պատկերազարդ գրքոյկներ:

Պատկերները տպված են Գերմանիայի Շտուտգարդ քաղաքում, Լէօվէյի յայտնի ֆիրմայում. տպագրութիւնը մաքուր, թուղթը լաւ և արժէ իւրաքանչիւր օրինակը 40 ԿՈՊԷԿ: Ընկերութեան գրասենեակում վաճառվում են նոյնանման պատկերազարդ և այլ գրքեր:

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисъ-Меликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. 1—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ դեկտեմբեր ամսի 23-ին, ցերեկվայ 1 ժամին, վարչութեան մէջ նշանակված է աճուրդ, քաղաքային աֆիշաների փոստի սիւների վրա յայտարարութիւններ կպցնելու իրաւունքը կապալով տալու համար:

Պայմանները կարելի է տեսնել վարչութեան 4-րդ բաժանմունքում ամեն օր առաւօտեան ժամի 10-ից մինչև 2-ը, կէսօրից յետոյ:

3—3

46—52
М. 36,019.

Թիֆլիսի Ժողովարան

Աւագների խորհուրդը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. անդամների, որ կիրակի օր, դեկտեմբերի 19-ին, երեկոյեան 10 ժամին նշանակված է ընդհանուր ժողով քննելու և վճռելու՝ 70 անդամների սահմանված գրքում գրած գանգատը, առաջարկված կանդիդատների քուէարկութիւնը և ձմեռային բնակարանի վարձելու հարցը և ուրիշ հարցեր:

(15, 19) 2—2

ՌՈՒՍԱՑ ԷԼԷՔՏՐՕ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ
✦ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ✦
„ՍԻՄԷՆՍ ԵՒ ՀԱԼՍԿԷ“

Ակցիոներական ընկերութեան վարչութիւնը, սրանով պատիւ ունի յայտնելու, որ նա բաց է արել

ԲԱԳՈՒԱՅ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Թատրոնական հրապարակի վրա, Արափէլօվի տանը, պօստատան դիմաց.

Հասցէ նամակների համար.—Акц. Общ. Русск. Электр. заводовъ „Сименсъ и Гальске“ Баку.

Հասցէ հեռագիրների համար. Сименсъ Баку. 10—10

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլօվինսկի Պրօսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու:

Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզօնի համար՝

Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ:



Ստացված է նոյնպէս ՖՕՐՄԷՆՆԻՅ ԶԳԵՍՏՆԵՐ.—դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և րէալական ուսումնարանների:

Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Գները ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան:

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի $\frac{1}{5}$ մասը: 29—40

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 23 դեկտեմբ. 3 յունվարի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի և Մայտրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մութաֆեանններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշենրօդերին: (ե. հ. շ.) 1—20

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թւի աշնան և 1900 թւի գարնան ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տարեկան ամենաընտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, մշտադալար և տերևաթափ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ:

(ե. հ. շ.) 26—40

„НИВА“

Подписчики „НИВЫ“ получатъ въ 1900 г.:

52 №№ журнала „НИВА“ (до 1500 столбцовъ текста и 500 гравюръ)

12 ТОМОВЪ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ Н. В. ГОГОЛЯ, которое будетъ весьма значительно дополнено матеріаломъ, не помѣщеннымъ въ послѣднихъ изданіяхъ соч. Гоголя, и будетъ отпечатано на хорошей бѣлой глазированной бумагѣ.

12 КНИГЪ „ЕЖЕМѢСЯЧНЫХЪ ЛИТЕРАТ. ПРИЛОЖЕНІЙ“ (романы, повѣсти, разсказы, популярно научныя статьи, очерки и проч. современныхъ авторовъ).

12 №№ „Парижскихъ модъ“ (до 300 модныхъ гравюръ по послѣднимъ фасонамъ лучшихъ матеріаловъ).

12 №№ рукодѣльныхъ и выпильныхъ работъ и выкроекъ въ натуральную величину (около 600 рисунк. и чертеж.).

Даетъ въ теченіе одного 1900 года своимъ подписчикамъ БЕЗПЛАТНО

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ“

На годъ со всѣми приложеніями:

Безъ доставки въ СПБ. . . 5 р. 50 К.	Съ перес. во всѣ города и мѣстн. Россіи. 7 р.	
Безъ доставки: 1) въ Москвѣ, въ конт. Н. Печковской – 6 р. 25 к. 2) въ Одессѣ, въ книжн. маг. „Образованіе“—6р. 50к	За границу 10 р.	
Съ доставкою въ СПБ. . . 6 р. 50 К.	Разсрочка платежа въ 2 и 3 срока.	

Полное собраніе сочиненій

Н. В. ГОГОЛЯ

СЪ ПОРТРЕТОМЪ, ФАКСИМИЛЕ и АВТОГРАФОМЪ.

Стѣнной календарь на 1900 г., печатан. красками.

Подробное иллюстрированное объявленіе высылается безплатно.

Требованія адресовать въ Главную Контору журн. „НИВА“, С.-Петербургъ, Малая Морская, 22.

2—2 М. 71024.

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Декабря 1899 г. Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул. № 27